ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2009-2010 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 25 մայիսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի (զեկուցող),

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի մարտի 16-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջեւ 2009-2010 թվականների ֆինանսական համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 26.04. 2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2010թ. մարտի 16-ին՝ Երեւանում:

2. Համաձայնագրով նախատեսված է սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով ֆինանսական եւ վարկային աջակցություն ցուցաբերել բնապահպանության, տնտեսության, էներգետիկայի եւ ժողովրդավարության ոլորտներում:

3. Համաձայնագրով նախատեսված գումարներն ուղղվելու են, մասնավորապես, հետեւյալ ծրագրերի իրագործմանը՝

- «Բնապահպանական ծրագիր. արգելոցների աջակցության բաղադրիչ»՝ ֆինանսական օժանդակություն մինչեւ չորս միլիոն եվրո,
- հանրային զարգացման համագործակցության շրջանակում «Էներգետիկայի ծրագիր. Վերականգնվող Էներգակիրների վարկավորման բաղադրիչ»՝ վերականգնման վարկերի բանկից մինչեւ տասնութ միլիոն եվրո գումարի չափով իջեցված տոկոսադրույքով վարկ, ինչպես նաեւ մինչեւ մեկ միլիոն հինգ հարյուր հազար եվրո գումարի չափով ֆինանսական օժանդակություն վերոհիշյալ ծրագրի անհրաժեշտ հարակից միջոցառումների անցկացման եւ համակարգման նպատակով,
- հանրային զարգացման համագործակցության շրջանակում «Ժողովրդավարության, համայնքային զարգացման, իրավական պետության ծրագիր. Համայնքային ենթակառուցվածքների բաղադրիչ»՝ վերականգնման վարկերի բանկից մինչեւ քառասուն միլիոն եվրո գումարի չափով իջեցված տոկոսադրույքով վարկ,
- հանրային զարգացման համագործակցության շրջանակում «Էներգետիկայի ծրագիր. Հիդրոէլեկտրակայանների Որոտան կասկադ բաղադրիչ» ծրագրի համար՝ վերականգնման վարկերի բանկից մինչեւ քսաներկու միլիոն եվրո գումարի չափով իջեցված տոկոսադրույքով վարկ:

4. Համաձայնագրով նախատեսվում է նաեւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության եւ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համատեղ, փոխադարձ համաձայնությամբ ընտրվող հասցեատեր, որին

հնարավորություն կտրվի ստանալու վարկային գումարներ՝ Վերականգնման վարկերի բանկից:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- երաշխավորել Վերականգնման վարկերի բանկի օգտին վճարումները եվրոյով՝ ի կատարումն երրորդ պետության՝ ՀՀ միջնորդությամբ ստանձնած վարկային պարտավորությունների,
- ազատել Վերականգնման վարկերի բանկին բոլոր տեսակի հարկերից եւ պետական այլ տուրքերից, երբ պայմանագրի կնքման գործընթացը տեղի է ունենալու ՀՀ տարածքում,
- վարկի եւ ֆինանսական օժանդակության օգտագործումից անհրաժեշտաբար բխող ծովային, ցամաքային եւ օդային ճանապարհներով անձանց եւ գույքի տեղափոխման համար ուղեւորներին եւ առաքողներին տրամադրել տրանսպորտային ձեռնարկության ազատ ընտրության հնարավորություն, ընդ որում՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գործող տրանսպորտային ձեռնարկությունների իրավահավասար մասնակցությամբ, անհրաժեշտության դեպքում տրամադրել պահանջվող թույլտվություններ տրանսպորտային հիշյալ ձեռնարկությունների մասնակցության համար:

Համաձայնագրով սահմանված են նաեւ դրա ուժի մեջ մտնելու կարգն ու պայմանները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2010 թվականի մարտի 16-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջեւ 2009-2010 թվականների ֆինանսական համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

25 մայիսի 2010 թվականի
ՍԴՈ- 883